## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ·

—

Զատկի կիւրակէի օրը Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց Տ. Մակար Սրբազնագոյն կաթուղիկոս սուրբ պատարագ մատոյց և յետ պատարագին ի շնորհաւորութիւն Քրիստոսի սուրբ Յարութեան հաճեցաւ ընդունել միաբանութեանս, Ճեմարանի վարժապետաց և աշակերտաց, Վաղարշապատի առաջաւոր անձանց և գիւղատանց աստիճանաւորներին։

—

Մեծապատիւ Պարոն Նիկողայոս Տէր Յակոբեան գալով Մայր Աթոռս հաճեցաւ նուիրել ի նպաստ Մայր Տաճարի վերանորոգութեան՝ 100 ռուբլի· Ճեմարանի բնագիտական բաժնի համար՝ 300 ռուբլի· և Ճեմարանի գրադարանի համար իւր գրատունը՝ աւելի քան 400 կտոր ընտիր գրքերով· նոյնպէս և Նոր-Նախիջևանի Ս. Թէոդորոս Եկեղեցւոյ երեսփոխան Պ. Սագիրեան նուիրել է ի նպաստ Ճեմարանի՝ 300 ռուբլի·

Աստուած ի հաճոյս իւր ընդունելով յիշեալ բարեսէր անձանց նուէրը վարձատրէ նոցա ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ բիւրապատիկ բարեօք։

—

Շնորհակալութեամբ ստացանք «Երևակայական հիւանդ» կատակերգութիւն Մոլիերի, թարգմանութիւն Պ. Երուանդայ Լալայեան· գինն է 40 կ· և «Մի կաթիլ արիւն» թարգ. Ս. Ամիրեանց, հրատարակութիւն Սմբատ-բէկ Լալայեանի· Գինն է 20· կոպեկ·

---

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ·

### (Ի ՄԱՐՏ ԱՄՍՈՅ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ)

## ՎԱՐՉԱԿԱՆՔ·

26 Մարտի· Սինօդը ըստ գրութեան Կ. Պօլսոյ Հայոց պատրիարքին շրջաբերական հրաման ուղարկեց բոլոր վիճակային ատեաններին, որոնել և գտնելուց յետոյ՝ ուղարկել Կ. Պօլսոյ Հայոց պատրիարքարանը Վանայ Դարման գիւղացի Աւօյեան Ալլահ-վերդի անուն անձին, որ տասն ամաց հետէ անխնամ թողնելով իւր կինն ու ընտանիքը՝ հեռացել է Ռուսաստան։

—

24 Մարտի· Սինօդը շրջաբերական հրաման ուղարկեց բոլոր վիճակային Ատեաններին այսուհետև տպագրել բոլոր թերթերը, եկեղեցական չափաբերական Մատեանները, Երեսփոխանական տոմարները, և խոստովանութեան տետրակները իւրաքանչիւր տարի մինչեւ Մայիս ամիսը ուղարկել որ-

պագրելու Մայր Աթոռոյս Տպարանում, ներկայացնելով յիշեալ տպագրե-լեաց տպագրութեան և կազմի գների ցուցակը, նոյն օրինակին հետևել պարտաւորելով նաև բոլոր Հոգևոր կառավարութեանց։

---

19 Մարտի. Սինոդը Կովկասեան կողմանցս հայ քահանայից վիճակը բար-ւոքելու համար առաջարկեց Երևանայ, Տփխիսու, Ղարաբաղու, Շամախ-ւոյ Հայոց կոնսիստորեաներին և Կարս և Բաթում նահանգաց Հոգևոր գոր-ծոց Կառավարչին, որ պարտաւորեցնեն հայ հասարակութեանց քահանայա-ցու առաջարկելիս՝ հարկաւոր վկայականների հետ ներկայացնեն նաև մեծա-գոյն մասին ստորագրութեամբ շինական դատարանի վաւերացմամբ համա-խոսական վճիռ, բացի օրինական կարգաւ սահմանեալ հոգևոր օրինակատա-րութեանց տուրքերից՝ տալ նաև — մի համբան՝ մի սոմար (3 փութ), կէս համբան 1½ փութ, քառորդ համբան 36 ֆունտ ցորեն, և մի չարէք վա-րելահող՝ առանց մի հարկապահանջութեան թէ տրքունի և թէ կալուածա-կան գիւղում. և եթէ իրանց խոստումը չըկատարեն, քահանայք ունին իրաւունք օրինաց ԺԱ. հատորի Ա. մասին 1048 յօդուածին համեմատ դիմել քաղաքական իշխանութեան՝ կոնսիստորեայի միջոցաւ. առանց այս պայմանագրի՝ քահանայ ձեռնադրելու համար խնդիր չի ընդունուիլ և կոն-սիստորեաներն ևս պէտք չէ ընդունեն։

---

14 Մարտի. Սինոդը Արժ. Ղևոնդ վարդապետ Ցախկիմեանին, նորա ի 5 Մարտի տարւոյս, յանուն Վեհափառ Կաթուղիկոսի մատուցած թախան-ձագին խնդրանաց և Նորին Վեհափառութեան ի 6ն Մարտի մակագրա-կան առաջադրութեան համեմատ արձակեց Ճեմարանի աւագ վերակացու-թեան պաշտօնից որոշելով բոլոր կահ կարասիքը ցուցակով յանձնել Ճե-մարանի վերատեսուչ Գեր. Մեսրոպ եպիսկոպոս Սմբատեանին։

---

## ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆՔ.

---

7 Մարտի. Սինոդը ըստ քննութեան Տաթևու Հոգևոր կառավարութեան՝ ստուգելով որ Սիւնեաց վիճակի Անկեղակոթ գիւղի Ցովսէփ քահանայն արբեցութեանց անձնատուր եղած՝ անհոգ է գտնուել մկրտելու իւր ծուխն եղող Մարկոս Յարութիւնեանի նորածին երեխան, որ մեռել է անկնունք, որոշեց զանցառու քահանային ենթարկել միամեայ եկեղեցական ապաշխա-րանաց, առանց փիլոնի տեղւոյն եկեղեցւոյ դրանը կանգնեցնելով։

17 Մարտի. Սարգիս Վարդապետ Տէր Գասպարեանը, որի վերայ Սինոդի, ի 25 Սեպտ. 1881 ամի, վերջին վճռով դրուած էր պարտականութիւն դրա-մական կարողութիւն ունենալու միջոցին վճարելու մաս առ մաս Էջմիած-նայ գանձարանին, Մխիթարեան Ստեփաննոս վարդապետի (այժմ Եպիս-կոպոս) 1877 թուին արած քննութեամբ Քիշնեւի վանքապատկան կալուած-

ներքոյ գրած 14,853 ր. 65 կոպէկ գումարը, քանի քանիցս Սինոդին գրելով և արդարացուցիչ փաստեր առաջարկելուց յետոյ. Սինոդը կամենալով վերահասու լինել նորա յառաջ բերած արդարացուցիչ փաստերի իսկութեան, նորա քննութեան գործը վճռեց ենթարկել վերաքննութեան. ուստի և հարկաւոր տոմարները և գործերը 1884 ամի Նոյեմբերի 19-ին № 2790 հրամանով յանձնեց յայնժամեան Բեսարաբիոյ վիճակաւոր առաջնորդին մի բարեկրօն և ընդունակ հոգևորականի ձեռքով վերստուգելու քննութիւնը և վերադարձնելու Սինոդին քաղուածով և իւր եզրակացութեամբ. Այդ վերստուգութիւնը յանձնուեց Գրիգորաւպօլսոյ հոգևոր կառավարութեան անդամ Դաւիթ Աւագ քահանայ Շահինեանին, որ վերաքննութիւնը կատարելուց յետոյ վերադարձրեց բոլոր գործը վիճակաւոր Առաջնորդին, և վերջինս՝ իւր 20 Յուլիսի 1885 ամի № 82 յայտարարութեամբ՝ Սինոդին. Սինոդը յօդուած առ յօդուած համեմատելով նախկին քննութիւնը վերստուգութեան հետ՝ գործի հանգամանքին համեմատ գտաւ վերստուգիչ քահանայի եզրակացութիւնը, որ է այսպէս.

« Արդ ի վերայ այսր ամենայնի յետ մանրազննին վերստուգութեան ամենից բանից գծագրելոց ի քննութեանն արարելոյ ընդ ձեռն բարեշնորհ Ստեփան Վարդապետի, ցուցմանց և բացատրութեանց Բարեշնորհ Սարգիս Վարդապետի, անդամ քահանայից, վարձաւորաց, արհեստաւորաց և այլոց ումանց, կատարեալ վստահութեամբ ասեմ թէ, որպէս ըստ սկզբանն քննութիւն արարեալ ընդ ձեռն բարեշնորհ Ստեփան Վարդապետի, պարտի համարել իբրև չեղեալ և անվաւեր, նոյն և ըստ էութեան եղեալ է այն հակառակ խղճի և արդարութեան. Զանի այդ քննութիւն ամենևին վնշել ինչ օրինական կարգապահութեան. հեռի է ամենևին ի ճշմարտութենէ և զուրկ իսպառ յո՛ր և է յարգելի ապացուցութեանց և փաստից, զի որպէս երևի ի վերոյգրեալ արձանագրութենէ իմմէ ամենայն բանք գծագրեալք յերեսին ևս մասունս արձանագրութեան քննչին ծնունդք են երևակայութեան միայն, և անտեղի և կամովին ենթադրութեանց հիմնեալ ի վերայ յայտնի ստախօսութեանց և ուրացութեանց Խաչատուր քահանայի և ումանց, ինքնակոչ արհեստաւորաց, լի անվայել, անտեղի և անպատիւ հիւսուածովք բանից, ի շօշափումն պատուոյ և կոչման բարեշնորհ Սարգիս Վարդապետի. Բայց յայսմանէ, որպէս երևեցաւ ի վերստուգութենէ և ի գրաւոր մեկին ապացուցութեանց և վկայաբանութեանց ի ձեռս բերելոց ինև բազում եղելութիւնք իսպառ յեղյեղեալք են ի քննչէն, և բազում բացատրութիւնք յառաջ բերեալք ի նմանէ վարձաւորաց և վկայից՝ կեղծեալք են և շինծու. իսկ ընդհակառակն արդարութիւն և ճշմարտութիւն բանից Սարգիս Վարդապետի, գրաւոր թղթովք և վկայութեամբք ապացուցեալք են և վկայեալք յարժանահաւատ պաշտօնական անձանց և ատենատեղեաց. Ուստի և ամենևին չիք ո՛ր և է հիմն օրինական՝ համարել վաւերական զքննութիւն արարեալ ընդ ձեռն Բարեշնորհ Ստեփան Վարդապետի նաև ըստ էութեան, և ըստ այսմ ենթարկել զՍարգիս Վարդապետն ո՛ր և է պատասխանատու-

թեան պաշանջմանց և տուգանաց։ Պարզ և յայտնի ստացումն Սարգիս Վարդապետի և ոչ իբրև գաղումն շնար է համարել միայն զ80 ռուբլին վարձս այգւոյ առաջնորդարանի վասն երկուց ամաց ըստ 2· յօդ· բ· մասին արձանագրութեան քննչին, զ85 ռուբլի վարձագրամս ստացեալս յերկուս վարձաւորաց ըստ 11րդ յօդ· նոյն մասին արձանագրութեան, ևս և 996 ռուբլի 50 կոպէկ արդիւնս այգեաց Աղքիրմանի, ընդ ամենայն 1161 ռուբլի 50 կոպ· զորոց զստացումն խոստովանեալ է ինքն Սարգիս Վարդապետն համարելով զինքն ընդ այն յիրաւունս՝ ցորչափ Սինոդն նախապէս չէ ազդարարեալ զնա վասն իրաւանց ստացման այնոցիկ արդեանց ըստ գծագրելոցն, ի բացատրութենէ նորին, որ յ2 հատորի գործոյն քննութեան երես 140··

Ուստի և Սինոդը ըստ օրագրութեան ի 19ն Մարտի տարւոյս վճռումէ·

«ՀՐԱՄԱՅԵՑԻՆ· ՆԱԽ՝ զքննութիւն արարեալ ընդ ձեռն Ստեփան Եպիսկոպոսի ըստ ի վեր անդր բացատրեալ հանգամանաց, օրինական ապացուցութեանց, պարզ և մեկին բացատրութեանց, վկայարանութեանց և գրաւոր փաստից համարել խպառ անվաւեր և զՍարգիս Վարդապետն ազատ կացուցանել ի 14,853 ռուբլի 65 կոպէկ պաշանջից եդելոց ի վերայ նորա, ըստ այնմիկ անապացոյց քննութեան։ ԵՐԿՐՈՐԴ՝ զ1161 ռուբլի 50 կոպէկս ստացեալս Սարգիս վարդապետի իբրև առաջնորդական արդիւնք ըստ օրինակի նախորդաց իւրոց թողուլ անպահանջ ի պատճառս սակաւութեան ռոճկին։ ԵՐՐՈՐԴ զգրագրութիւնս ըստ այսմ առարկայի կարճել խպառ և զգործն համարելով աւարտեալ՝ տալ յարխիւն ի պահեստ։ ՉՈՐՐՈՐԴ՝ ի մխիթարութիւն բարոյական զրկանաց՝ որոց ենթարկեցաւ Սարգիս վարդապետն, զսոյն օրագրութեանս տալ հրատարակել յԱրարատ ամսագրի ի գիտութիւն և ի շինութիւն գայթակղեալ մտաց։ և ՀԻՆԳԵՐՈՐԴ որովհետև վերաստուգութիւն սոյն քննողական գործոյն լեալ է ըստ հրամանի Սինոդիս՝ յանձնարարութեամբ նախկին վիճակաւոր առաջնորդին Նոր—Նախիջևանի և Բեսարաբիոյ, այժմ Սրբազնագոյն կաթուղիկոսի ամենայն Հայոց Տ· Մակարայ և ի նմանէ իսկ առ առաջնորդութեամբ իւրով առաջարկեալ Սինոդիս, վասն որոյ և զքաղուած օրագրութեանս խոնարհաբար մատուցանել ի տեղեկութիւն Նորին Վեհափառութեան, և զայսմ եղրակացութենէ Սինոդիս ծանուցանել Սարգիս Վարդապետի Տէր Գասպարեանց, ստորագրութեամբ նորա ի վերայ նախարտակի սոյն օրագրութեան»: